

ԸՆԴԵՐՔԻ ՌԵՍՈՐՍՆԵՐԻ ԶԱՐՏԵՋԱԳՐՄԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՋ

Ա. Ռ. ԱՎԱԳՅԱՆ

Ընդերքի ռեսուրսների քարտեզագրումը և շրջանացումը հնարավորություն են տալիս բացահայտելու ռեսուրսաօգտագործման, տարածքի հասարակական կյանքի կազմակերպման այնպիսի ձևեր, որոնցում.

ա) ներդաշնակ են մարդ-բնություն փոխհարաբերությունները, որոնց կազմավորման ընթացքում վճռորոշ դեր են խաղում մարդկային հատկանիշները.

բ) առկա են մարդկային զարգացման կայուն հայեցակարգի իրականացման անհրաժեշտ պայմաններ:

Քարտեզագրման միջոցով տարածքային դաշտի վրա մեկ ընդհանրության են բերվում ընդերքի ռեսուրսների վերաբերյալ բոլոր փաստական նյութերը, կատարվում է նրանց խմբավորում, դասակարգում և շրջանացում:

Քարտեզագրումը հնարավորություն է տալիս.

ա) ընդերքի ռեսուրսների բոլոր հանքավայրերը (աղբյուրները, հորատանցքերը) տեղադրել որոշակի տարածքի վրա:

բ) Մեկ միասնության մեջ տեսնել ընդերքի ռեսուրսների օգտագործման և հասարակական կյանքում առաջացած երևույթները:

գ) Կատարել ընդերքի հարստությունների շրջանացում:

Ըստ Ն.Ն. Կոլոսովսկու. «Շրջանացումը պայմաններ է ստեղծում առավելագույն չափերով մեծացնելու աշխատանքի արտադրողականությունը»: Ե. Ն. Պերցիկի կարծիքով. «Շրջանացումը ապահովում է արտադրական ուժերի նպատակային համակարգերի ձևավորումը»:

Շրջանացումը հնարավորություն է տալիս հարցի լուծումը հասցնելու այնպիսի ընդհանրության, որը ներառում է այն ամենը, ինչն անհրաժեշտ է մարդուն ապրելու և աշխատելու տվյալ աշխարհագրական միջավայրում:

Շրջանացումը հիմք է հանդիսանում շրջանային պլանավորման, իսկ շրջանային պլանավորումը՝ «շրջանային քաղաքականության համար», որը աստիճանաբար շրջանը դարձնում է ինքնուրույն տնտեսական, սոցիալ-տնտեսական, էթնիկական միավոր: Սա իր հերթին օգնում է նպատակային օգտագործելու շրջանի բնառեսուրսային պոտենցիալը, աշխարհագրական նորույթները, լուծել սոցիալ-տնտեսական, էթնիկական, էկոլոգիական խնդիրները:

Շրջանային քաղաքականությունը բոլոր հարցերը լուծում է առաջին հերթին ելնելով «տեղական տան» շահերից:

Այլ խոսքով, շրջանային քաղաքականությունը վերջին հաշվով միջոց է «շրջանային կառավարման» համար: Ասվածի լավագույն հաստատումը կարող ենք տեսնել Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների գնահատման քարտեզում, որտեղ տեղադրված են հանրապետության տարածքում առկա մետաղային և շինանյութերի, հանքային ջրերի, օգտակար հանածոների 865 հանքավայր (աղբյուրներ, հորատանց-

¹ Н. Н. Колосовский. Основы экономического районирования, М., 1958, с. 65.

² Е. Н. Перцик. Районная планировка, М., 1977, с.137.

քեր), որոնք բաժանված են 142 ռեսուրսային շրջանների, իսկ վերջիցներս ըստ իրենց հաշվեկշռային պաշարների միավորվել են 5 խմբի մեջ՝ շատ խոշոր, խոշոր, միջին մեծությամբ, փոքր և շատ փոքր:

Ռեսուրսային շրջաններ

Շրջանների խմբեր	Շրջանների քանակը		Շրջանների ռեսուրսները
	հատ	տոկոս	տոկոս
1. Շատ խոշոր	11	7.75	42.87
2. Խոշոր	21	14.79	28.75
3. Միջին	16	11.27	13.06
4. Փոքր	46	32.39	13.72
5. Շատ փոքր	48	33.80	1.60
Ընդամենը	142	100.000	100.00

Ինչպես երևում է աղյուսակի և քարտեզի տվյալներից, ռեսուրսների գերակշռող մասը՝ 42.87 %, գտնվում են 11 խոշոր հանգույցներում (շրջաններում), որոնք կազմում են հանգույցների ընդհանուր թվի 7.75 %: Շատ փոքր խմբի մեջ մտնող 48 հանգույցներին (33.8 %) բաժին է ընկնում ռեսուրսների ընդամենը 1.60 %-ը:

Խոշոր և շատ խոշոր շրջաններում տնտեսական պայմանները (գործոնները) բարենպաստ են կապիտալ ներդրումներ կատարելու համար: Ընդունելով տնտեսական (դրամական) գործոնի առաջնային բնույթը՝ պետք է կարևորել նաև կատարված շրջանացումից բխող հետևությունը, այն է՝ միջին և փոքր շրջանների ներքաշումը տնտեսական շրջանառության մեջ, կարող է նպաստել կապիտալ ներդրումների, ինչպես նաև բնակչության ապակենտրոնացմանը, որը սակավաբնակ՝ հատկապես մերձսահմանային տարածքների տնտեսական պոտենցիալն ավարտելու առումով, հանրապետության համար ունի կարևոր ռազմավարական նշանակություն:

Փոքր ռեսուրսային շրջանների օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ խոշոր ռեսուրսային շրջաններում հանածո հումքի օգտագործման ընթացքում առաջանում է շատ ծանր էկոլոգիական վիճակ: Օրինակ՝ Քաջարան-Լեռնաձորի և Ագարակ-Գուտեմնիսի, Կապան-Օահույանի շրջաններում:

Փոքր շրջաններն ավելի ճկուն են և կարող են արագ արձագանքել հասարակական կյանքում կատարվող փոփոխություններին: Նրանց շահագործումը չի պահանջում խոշոր կապիտալ ներդրումներ, չի հանգեցնում խոշոր լեռնահանքային, լեռնամետալուրգիական հանգույցների ստեղծման, որոնք, ինչպես հայտնի է, հանքավայրերի սպառման պարագայում ծնում են սոցիալական, տնտեսական և այլ կարգի ղժվարալուծելի խնդիրներ:

Փոքր շրջանները տեղավորված լինելով սահմանափակ տարածքի և ժամանակի մեջ ավելի են հեշտացնում կանխատեսման աշխատանքները:

Ինչպես երևում է աղյուսակից, որքան փոքր են շրջանները, այնքան ընդարձակ է նրանց աշխարհագրությունը, հետևաբար փոքր շրջանների քաղաքականությունը կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վարվող «տնտեսության ապակենտրոնացման» քաղաքականության համար:

Ռեսուրսային շրջաններն անկախ իրենց մեծությունից հիմք կարող են ծառայել նաև շրջանների և առանձին մարզերի բոլոր ռեսուրսների «կոմպլեքսային օգտագործման» ավանդական հասկացության բովանդակության վերանայման համար: Նոր բովանդակությունը հարստանում է նոր բաղադրիչներով ու մոտեցումներով: Կոմպլեքսային երկրաբանական-տեխնոլոգիական և տնտեսական-արտադրական բաղադրիչներին ավելանում են սոցիալական, էկոլոգիական, էսթետիկական, հոգևոր-մշակութային բաղադրիչները:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության ռեսուրսների քարտեզագրումը և շրջանացումը օբյեկտիվ հիմք կարող են ծառայել սոցիալ-տնտեսական զարգացման կոմպլեքսային ծրագրերի կազմման և գիտականորեն հիմնավորված ռեգիոնալ քաղաքականության մշակման և իրականացման համար:

